ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՍԿԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Գործողությունների ծրագիր
2013-2015թթ.

Հաստատված՝

2013թ. հուլիսի **26**-ին կայացած ՀՀ վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Սույն Գործողությունների ծրագիրը բխում է ՀՀ կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունից: Ներկայացված գործողությունների ծրագիրը սահմանում է ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտների ռազմավարության իրականացման 3-ամյա ծրագիր 2013-2015թթ. ժամանակահատվածում:

Գործողությունների ծրագիրը ներկայացված է 3 մակարդակով՝ ռազմավարական ուղղությունների, ռազմավարական նախաձեռնությունների և գործողությունների: Գործողությունները խմբավորված են ըստ ռազմավարական նախաձեռնությունների, վերջիններս իրենց հերթին պատկանում են սահմանված ռազմավարական ուղղություններից մեկին:

Սույն գործողությունների ծրագրի շրջանակներում ռազմավարական ուղղություններն են՝

1. Օրենսդրական բարեփոխումներ
2. Մատչելի հումքի ապահովում
3. Որակի ապահովում և վերահսկում
4. Մասնագիտական կրթության բարելավում և աշխատուժի վերապատրաստում
5. Ներդրումների և արտահանման ֆինանսական աջակցություն
6. Ոլորտի առաջմղում
7. ԱՏԳ ստեղծում և օտարերկրյա ընկերությունների ներգրավում

Յուրաքանչյուր տարվա վերջում ոլորտային խորհուրդը կհաստատի Գործողությունների ծրագիրը՝ հաջորդ երեք տարիների համար:

1. Սույն գործողությունների ծրագիրն ընդհանուր է ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտների զարգացման ռազմավարությունների համար: Սա պայմանավորված է մի շարք ընդհանրություններով ոլորտների արժեշղթայի տարբեր հատվածների, առաջմղման և զարգացման տեսլականի միջև: Գործողությունների ծրագրի շրջանակում առանձին ոլորտների համար՝ մի շարք գործողություններ կիրականացվեն համատեղ: Վերոնշյալով պայմանավորված՝ ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտների համար նախատեսվում է մեկ ընդհանուր ոլորտային խորհրդի ստեղծում:

2. Սույն Գործողությունների ծրագրում պետության կողմից համաֆինանսավորվող գործողությունների իրականացման նախապայման է մասնավոր հատվածի ֆինանսավորումը:

3. Սույն Գործողությունների ծրագիրը ներառում է «Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների բնագավառի կարգավորման և զարգացման մասին» հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի* մի շարք գործողություններ**:

**Համաձայն ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 24-ի նիստի N 20 արձանագրային որոշման Հավելված N 1-ի:*

*** Սույն Գործողությունների ծրագրում վերոնշյալ գործողություններն են՝ 3.1.1, 3.1.2, 3.3.1, 3.5.1, 3.5.2, 3.5.3, 3.6.1, 3.6.2 և 3.6.3:*

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՈՒ)

ՌՈՒ 1. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

ՌՈՒ 2. ՄԱՏՉԵԼԻ ՀՈՒՄՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՌՈՒ 3. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՆ)

1.1. Ոսկեգործական վերջնական արտադրանքի ԱԱՀ հարկման նոր մոտեցման կիրառում և անհատների կողմից ոսկյա զարդերի, ոսկու ձուլակտորների հանձնման դեպքում եկամտահարկով հարկման մեխանիզմի փոփոխություն

2.1. Ռուսական աղամանդի հումքի ձեռք բերման պայմանների բարելավում

2.2. Հայաստանում ոսկու վերջնական զտարկման հնարավորության ուսումնասիրություն

Ոսկեգործության ոլորտ

3.1. Որակի վերահսկողության օրենսդրական դաշտի ամբողջականացում

3.2. Վերահսկում իրականացնող կառույցների կարողությունների զարգացում

3.3. Որակի վերահսկողության ստուգումների վերսկսում

3.4. Հարգորոշման առավել կատարելագործված տեխնոլոգիաների կիրառում

3.5. Հարգադրոշման միջազգային փոխճանաչելիության ապահովում

3.6. Տեղեկատվական համակարգերի ստեղծում և սպառողների իրազեկության ապահովում

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՈՒ)

ՌՈՒ 4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՆ)

Ոսկեգործության և ժամագործության ոլորտներ

4.1. Հայաստանում մասնագիտական սեմինարների կազմակերպում և մասնակցություն այլ երկրներում կազմակերպվող ոլորտի մասնագիտական սեմինարների

4.2. Հայաստանում դիզայնի դպրոցի և գիտակրթական ինովացիոն համալիրի հիմնման մեկնարկ

4.3. Պետական աջակցություն աշխատուժի վերապատրաստման նախաձեռնություններին

ՌՈՒ 5. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

5.1. Ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորում

ՌԱՑՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՄՈՒ)

ՌՈՒ 6. ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՄՂՈՒՄ

6.1. Առաջնային նպատակային շուկաներում ցուցահանդեսների մասնակցության աջակցություն

6.2. Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի կազմակերպում և միջազգային ճանաչելիության ապահովման աջակցություն

6.3. Առաջմղման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում

6.4. Միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով ոլորտի առաջմղում

ՌԱՑՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՌՆ)

ՌՈՒ 7. ԱՏԳ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

7.1. Ոսկեգործության, աղամանդագործության և ժամագործության ԱՏԳ-ի հիմնում

7.2. Ոսկեգործության և ժամագործության ոլորտներում Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում

7.3. Աղամանդագործության ոլորտում Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում

ՌՈՒ 1.
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 1.1. Ոսկեգործական վերջնական արտադրանքի ԱԱՀ հարկման նոր մոտեցման կիրառում և անհատների կողմից ոսկյա զարդերի, ոսկու ձուլակտորների հանձնման դեպքում եկամտահարկով հարկման մեխանիզմի փոփոխություն	Ոսկեգործության ոլորտում ստվերի կրճատում և պետբյուջե հարկերի վճարի ծավալների աճ:

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
1.1.1. Ոսկեգործական վերջնական արտադրանքի* իրացման դեպքում՝ հումքի մասով (ոսկու և թանկարժեք քարերի մասով) ԱԱՀ հարկման բազային նվազեցման հարցի քննարկում և համապատասխան առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	-	Համապատասխան առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ՝ 2013թ. հոկտեմբեր	Մշակված առաջարկությունների փաթեթ
1.1.2. Անհատների կողմից ոսկյա զարդերի և ոսկու ձուլակտորների հանձնում-վաճառքը եկամտահարկից ազատելու հարցի քննարկում և համապատասխան առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	-	Համապատասխան առաջարկության ներկայացում ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհուրդ՝ 2013թ. հոկտեմբեր	Մշակված առաջարկությունների փաթեթ

*Ներառում է նաև ոսկուց պատրաստված ժամացույցները:

ՌՈՒ 2.

ՄԱՏՉԵԼԻ ՀՈՒՄՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.1. Ռուսական ադամանդի հումքի ձեռք բերման պայմանների բարելավում	Ռուսական ադամանդի հումքի Հայաստան արտոնյալ պայմաններով արտահանում

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.1.1. Ռուսական ադամանդի հումքի Հայաստան արտահանման ժամանակ (ներառյալ արտահանում վերամշակման համար ռեժիմով գործարքները) առավել արտոնյալ պայմանների* կիրառման նպատակով բանակցությունների վարում Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում. **Ներկայումս Ռուսաստանից հումքի արտահանման վրա կիրառվում է 6.5% արտահանման մաքսատուրք:*	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Արդեն սկսված է, վերջնաժամկետ՝ 2014թ. հունիս	Օրակարգում հարցի ներառում և հայկական կողմից առաջարկությունների մշակում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 2.2. Հայաստանում ոսկու վերջնական զտարկման հնարավորության ուսումնասիրություն	Հայաստանում ոսկու վերջնական զտարկման տնտեսապես շահավետ հնարավորության պարագայում տեղական ոսկու մատչելի հումքի ապահովում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
2.2.1. Հայաստանում ոսկու վերջնական զտարկման հնարավորության ուսումնասիրություն. - Աշխատանքային խմբի ստեղծում - Հայաստանում ոսկու վերջնական զտարկման հնարավորության շուրջ քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ - Անհրաժեշտ քայլերի նույնականացում, որն իրագործելի կդարձնի զտարկման իրականացումը Հայաստանում - Ուսումնասիրության արդյունքների և առաջարկությունների ներկայացում ոլորտային խորհրդին	Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Ուսումնասիրության արդյունքների ներկայացում ոլորտային խորհրդին - վերջնաժամկետ՝ 2013թ. հոկտեմբեր	Ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ քայլերի նույնականացում, որն իրագործելի կդարձնի զտարկման իրականացումը Հայաստանում:

ՌՈՒ 3.

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ (ոսկեգործության ոլորտ)

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.1. Ոսկեգործական իրերի որակի վերահսկողության օրենսդրական դաշտի ամբողջականացում	Ոսկեգործական իրերի հետագծելիության ապահովում: Ոսկեգործական իրերի շրջանառության ոլորտում իրավախախտումների կանխարգելում և նվազեցում: Բարելավված որակով ոսկեգործական տեղական արտադրանք (հարգի, համաձուլվածքի տեսակի և պարունակության ճշգրտություն):

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.1.1. Հարգադրոշմների, անվանանիշերի և տարբերանիշերի դրոշմման ուղեցույցերի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Վերջնաժամկետ՝ 2013թ. դեկտեմբեր	Հարգադրոշմների, անվանանիշերի և տարբերանիշերի դրոշմման մշակված ուղեցույցեր:
3.1.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկեգործական իրերի վրա անվանանիշի առկայության պարտադիր պահանջի կիրառում. - Համապատասխան օրենսդրական փոփոխության նախագծի մշակում - Կիրառման մեխանիզմի հստակեցում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Նախագծի մշակում և կիրառման մեխանիզմի հստակեցում - վերջնաժամկետ՝ 2013թ. նոյեմբեր	Մշակված նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն
3.1.3. Ոլորտային խորհրդում քննարկում տարբերանիշերի և անվանանիշերի տեղական պատրաստման հնարավորության շուրջ	Ոլորտային խորհուրդ	-	Վերջնաժամկետ՝ 2013թ. նոյեմբեր	Մասնավոր հատվածի կողմից տարբերանիշերի և անվանանիշերի տեղական պատրաստման հնարավորության քննարկման իրականացում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.2. Ոսկեգործության ոլորտում վերահսկում իրականացնող կառույցների կարողությունների զարգացում	Ոսկեգործական իրերի շրջանառության ոլորտում որակի բարելավում և սպառողների վստահության աճ տեղական արտադրանքի նկատմամբ:

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.2.1. Շուկայի վերահսկողության տեսչության տեխնիկական սարքավորումների բազայի ընդլայնում. - Ժամանակակից սարքավորումների* և հարակից նյութերի ձեռքբերում **Սարքավորումներ (օր.՝ լազերային), որոնք կարող են ճշգրտորեն և առանց փորձաքննվող ոսկեգործական իրը վնասելու որոշել դրա համաձուլվածքի տեսակը և պարունակությունը:*	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Բյուջե՝ 34 մլն ՀՀ դրամ տարեկան (2014թթ.) Ֆին. աղբյուր՝ ԵՄ-ի CIB աջակցության ծրագիր	2014թ	Վերահսկողության իրականացման տեխնիկական բազայի ընդլայնում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.3. Ոսկեգործական իրերի որակի վերահսկողության ստուգումների վերսկսում	Ոսկեգործական իրերի շրջանառության ոլորտում որակի բարելավում և սպառողների վստահության աճ տեղական արտադրանքի նկատմամբ:

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.3.1. Ոսկեգործական իրերի մանրածախ առևտրի կետերի ստուգումների և լիցենզավորված կազմակերպությունների լիցենզավորման պահանջների պայմանների ստուգումների վերսկսում	Շուկայի վերահսկողության տեսչություն	-	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. մարտ	Անորակ և օրենսդրության պահանջներին չբավարարող (օր.՝ չհարգադրոշմված) արտադրանքի տեսակարար կշռի նվազում:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.4. Ոսկեգործական իրերի հարգորոշման առավել կատարելագործված տեխնոլոգիաների կիրառում	Ոսկեգործական իրերի շրջանառության ոլորտում իրավախախտումների կանխարգելում և նվազեցում: Բարելավված որակով ոսկեգործական տեղական արտադրանք (հարգի, համաձուլվածքի տեսակի և պարունակության ճշգրտություն):

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.4.1. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման լիցենզավորված ընկերություններին պետական աջակցություն առաջատար սարքավորումներ ձեռք բերելու գործում*: **Կիրականացվի 5.1.1 գործողության շրջանակում (ընկերությունների արտադրական հզորությունների ընդլայնման ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման ապահովում)*	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Ֆինանսավորման աղբյուր՝ վարկային միջոցներ	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մայիս	Պետական աջակցության համապատասխան գործիքի առկայություն (վարկավորում և տոկոսների սուբսիդավորում)

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.5. Հայաստանում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշման միջազգային փոխճանաչելիության ապահովում	Տեղական և միջազգային մակարդակով վստահություն Հայաստանում որակի վերահսկման համակարգի և արտադրանքի որակի նկատմամբ:

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.5.1. «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմման և վերահսկողության մասին» կոնվենցիային միացում – «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմման և վերահսկողության մասին» կոնվենցիայով նախատեսվող հարգորոշման և հարգադրոշմման գործունեության հետ առնչվող համապատասխան ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի ներդրում – «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմման և վերահսկողության մասին» կոնվենցիային միացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Վերջնաժամկետ՝ 2014թ. դեկտեմբեր	Միջազգային չափանիշներին համապատասխան առկա օրենսդրական դաշտ Հայաստանից դեպի կոնվենցիայի անդամ երկրներ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի արտահանման ժամանակ դրանց հարգորոշման և հարգադրոշման հետ կապված կրկնակի ընթացակարգերի բացառում
3.5.2. ՀՀ և ԱՊՀ ու այլ երկրների միջև «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգադրոշմների և տարբերանիշերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագրերի ստորագրում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	-	Շարունակական գործողություն	ԱՊՀ և այլ երկրներ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի արտահանման ժամանակ դրանց հարգորոշման և հարգադրոշման հետ կապված կրկնակի ընթացակարգերի բացառման համաձայնագրի նախագծի մշակում և քննարկում

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 3.6. Ոսկեգործության ոլորտում տեղեկատվական համակարգերի ստեղծում և սպառողների իրազեկության ապահովում	Ոսկեգործական իրերի շրջանառության ոլորտում որակի բարելավում և սպառողների վստահության աճ տեղական արտադրանքի նկատմամբ:

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
3.6.1. Հարգորոշող և հարգադրոշմող կազմակերպությունների մասին վիճակագրության վարման համակարգի ներդրում* **Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հետագծելիությունը և հարգորոշող կազմակերպությունների վերահսկելիությունն ապահովելու նպատակով հարգորոշող կազմակերպությունների կողմից հարգադրոշմված իրեր արտադրողի, ներմուծողի, այդ իրերի ծավալների վերաբերյալ վիճակագրական ռեգիստր*	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	-	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. II-րդ կիսամյակ	Հարգորոշող և հարգադրոշմող կազմակերպությունների մասին վիճակագրության վարման համակարգի մշակում
3.6.2. Ոլորտի տեղեկատվության արագ փոխանակման համակարգերի ստեղծում ՀՀ պատկան մարմինների միջև	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԿԱ ՊԵԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն, Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն	-	Վերջնաժամկետ՝ 2013թ. նոյեմբեր	Համակարգի ներդնում
3.6.3. Ոլորտում բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին. – Համապատասխան տեղեկատվության տրամադրում – Իրազեկիչ սեմինարների կազմակերպում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	-	Սկիզբ՝ 2013թ. սեպտեմբեր (շարունակական գործողություն, նախատեսվում է մինչև 2014թ. ավարտը)	Ոլորտում բարեփոխումների վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների իրազեկություն

ՌՈՒ 4.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ (ոսկեգործության և ժամագործության ոլորտներ)

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.1. Հայաստանում մասնագիտական սեմինարների կազմակերպում և մասնակցություն այլ երկրներում կազմակերպվող ոլորտի մասնագիտական սեմինարների	Ոլորտի մասնագիտական աշխատուժի գիտելիքների և հմտությունների բարելավում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.1.1. Հայաստանում ոսկեգործության և ժամագործության ոլորտի մասնագիտական սեմինարների և վարպետության դասերի կազմակերպում՝ ներգրավելով հայ և միջազգային մասնագետների*. - Սեմինարների և վարպետության դասերի թեմաների ընտրություն - Մասնագետների նույնականացում և բանակցությունների վարում - Սեմինարների և վարպետության դասերի կազմակերպում և անցկացում** *Միջոցառումներին նախատեսվում է ինչպես ոլորտի արտադրողների, այնպես էլ՝ կրթական համակարգի ներկայացուցիչների մասնակցությունը ** Նախատեսվում է տարեկան 4 սեմինար	«AJA», Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 8.6 մլն ՀՀ դրամ տարեկան* (2014-2015թթ.) Ֆին. աղբյուր՝ դոնոր կազմակերպություն (50%), մասնակից ընկերություններ (50%) *Նախատեսվում է, որ կգործածվեն Հայաստանի և Սփյուռքի մասնագիտական ռեսուրսները և կապերը՝ Հայաստանում կազմակերպվող սեմինարներին համապատասխան մասնագետների նվազագույն ծախսերով ներգրավման համար:	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մայիս (ժամկետները և հաճախականությունը ենթակա են հստակեցման)	Ոլորտի վերապատրաստված մասնակիցներ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.1. Հայաստանում մասնագիտական սեմինարների կազմակերպում և մասնակցություն այլ երկրներում կազմակերպվող ոլորտի մասնագիտական սեմինարների	Ոլորտի մասնագիտական աշխատուժի գիտելիքների և հմտությունների բարելավում

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.1.2. Մասնակցություն այլ երկրներում (Իտալիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ և այլն) կազմակերպվող ոսկեգործության և ժամագործության ոլորտի մասնագիտական դասընթացների*. - Սեմինարների և վարպետության դասերի նույնականացում** - Հայաստանի ոլորտից մասնակիցների նույնականացում - Արտերկրում սեմինարների և վարպետության դասերին մասնակցություն *Նախատեսվում է տարեկան 2 սեմինար (յուրաքանչյուրին 5 մասնակից) **Ստորև ներկայացված է ոլորտի որոշ միջազգային սեմինարների և վարպետության դասերի կազմակերպիչների ցանկը և դրանց անցկացման վայրը. *Իտալիա* - Alchimia Contemporary Jewellery School, Le Arti Orafe Jewellery School & Academy, The Professional Jewellery School Perseo (Ֆլորենցիա), SoleCosta Studio, TrendVision Jewelry (Արեզո), Istituto Lorenzo de' Medici (Հռոմ), *ԱՄՆ* - American School of Jewelry (Մայամի) *Մեծ Բրիտանիա* - Birmingham Institute of Art and Design (Բիրմինգհամ), School of Art and Design of University of Lincoln (Լինքոլն), Leith School of Art (Էդինբուրգ) Սեմինարների վերջնական ընտրությունը կիրականացվի մասնակից ընկերությունների հետ համատեղ:	«AJA», Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 9.7 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.) Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե (50%), մասնակից ընկերություններ (50%)	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մայիս (ժամկետները և հաճախականությունը ենթակա են հստակեցման)	Ոլորտի վերապատրաստված մասնակիցներ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.2. Հայաստանում դիզայնի դպրոցի և գիտակրթական ինովացիոն համալիրի ստեղծման ուսումնասիրություն և հիմնման մեկնարկ	Ոսկեգործության և հարակից ոլորտների մասնագիտացված գիտակրթական համալիրի առկայությունը, որը ընկերություններին կապահովի որակյալ կադրերով

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.2.1. Գործողության շրջանակում նախատեսվում է. - նախաձեռնող խմբի ստեղծում - դիզայնի դպրոցի և գիտակրթական ինովացիոն համալիրի հիմնման շուրջ քննարկումների անցկացում շահագրգիռ կողմերի հետ - համապատասխան ծրագրի մշակում (անհրաժեշտ բյուջեի գնահատմամբ) - բանակցություններ հնարավոր ֆինանսավորող դոնորների հետ	«AJA», Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	-	Ծրագրի մշակում - վերջնաժամկետ՝ 2014թ. փետրվար Բանակցություններ հնարավոր դոնորների հետ – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մարտ	Դիզայնի դպրոցի և գիտակրթական ինովացիոն համալիրի ստեղծման ծրագրի քննարկում: Հուշագրեր/ պայմանագրերի քննարկում հնարավոր ֆինանսավորողների հետ:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 4.3. Պետության կողմից ժամագործության ոլորտի աշխատուժի՝ արտերկրում վերապատրաստման համաֆինանսավորում	Ոլորտի մասնագիտական աշխատուժի գիտելիքների և հմտությունների բարելավում

Գործողություն	Պատասխանատու/իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
4.3.1. Ոլորտի ընկերությունների (մասնավորապես՝ օտարերկրյա) կողմից աշխատուժի արտերկրում (հատկապես՝ Շվեյցարիայում) վերապատրաստման համաֆինանսավորում պետության կողմից*. – Սկզբունքների մշակում – Կանոնակարգի մշակում • ֆինանսավորման նվազագույն և առավելագույն ծավալների հատկորոշում - պետական համաֆինանսավորման ընդհանուր ծավալը՝ տարեկան առավելագունը 5 մլն ՀՀ դրամ: • այլ – Համապատասխան հստակ մեխանիզմի ստեղծում – Համաֆինանսավորում *Նախատեսվում է տարեկան 2 երկշաբաթյա վերապատրաստում (յուրաքանչյուրին 10 մասնակից):	Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Բյուջե՝ 10 մլն ՀՀ դրամ տարեկան* (2014-2015թթ.) Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե (50%), մասնակից ընկերություններ (50%) * *Ծախսերի գնահատականը նախնական է և կախված կլինի վերապատրաստման երկրից, ներգրավված աշխատուժի քանակից և վերապատրաստման տևողությունից:*	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մարտ (ժամկետները և հաճախականությունը կախված են վերապատրաստումը նախաձեռնող ընկերություններից)	Պետական աջակցության համապատասխան գործիքի առկայություն

ՌՈՒ 5.

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 5.1. Ոլորտի ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի ապահովում	Ոլորտի ներդրումային ծրագրերի իրագործման խթանում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
5.1.1. Ընկերությունների արտադրական հզորությունների ընդլայնման ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման ապահովում* – Հայտերի ընդունում – Հայտերի քննություն – Ֆինանսավորման որոշման կայացում – Ֆինանսավորում	ՓՄՁ Ներդրումներ ՈՒՎԿ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Ֆինանսավորման աղբյուր՝ վարկային միջոցներ**	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. հունվար	

**Ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի մշակումը նախատեսված է Դեղագործության և բիոտեխնոլոգիաների ոլորտի Գործողությունների ծրագրով:*

***2013-2015թթ. ՄԺԾԾ-ով նախատեսված է 50, 80 և 120 մլն ՀՀ դրամ արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորման գումար 2013, 2014 և 2015թթ. համար համապատասխանաբար (Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակում բոլոր գերակա ոլորտների համար միասին վերցված):*

ՌՈՒ 6.

ՈԼՈՐՏԻ ԱՌԱՋՄՂՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 6.1. Ոսկեգործության և ժամագործության ոլորտում առաջնային նպատակային շուկաներում ցուցահանդեսների մասնակցության աջակցություն	Առաջնային նպատակային շուկաներում բիզնես կապերի ընդլայնում և Հայաստանից ոսկեգործական արտադրանքի արտահանման ծավալների աճ

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
6.1.1. Առաջնային նպատակային շուկաներում ոլորտային ցուցահանդեսներին* ընդհանուր հայկական տաղավարով՝ հայկական ընդհանուր բրենդի ներքո մասնակցության** աջակցություն. – Ոլորտի ընկերությունների միջազգային ցուցահանդեսներին մասնակցության աջակցման մեխանիզմի մշակում – Աջակցության տրամադրում*** ***Նշումներ.*** **Առաջնային նպատակային շուկաներում թիրախային ցուցահանդեսներ՝* • *Ռուսաստան – YUVELIR (YUVELIR 2, JUNWEX ST Petersburg/Moscow)* • *Ղազախստան – Aru* • *Ուկրաինա – Yuvelir Expo Ukraine* ***Ոլորտի զարգացմանը զուգահեռ հետագա տարիներին նախատեսվում է նաև մասնակցություն ոլորտի համաշխարհային խոշորագույն մի քանի ցուցահանդեսների, ինչպիսիք են օրինակ՝ Վիչենցայի (Իտալիա), Բազելի (Շվեյցարիա), (JCK) Լաս Վեգասի (ԱՄՆ) և Հոնկոնգի միջազգային ցուցահանդեսները:* ****Նախատեսվում է աջակցել 11, 14 և 17 ընկերությունների 2013, 2014 և 2015 թվականներին համապատասխանաբար: Տարեկան 3 ցուցահանդեսի մասնակցության աջակցություն առաջնային նպատակային շուկաներում:*	ԶՀԳ, Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, «AJA» , ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե*՝ 27.8 մլն ՀՀ դրամ 2014թ.), 32.8 մլն ՀՀ դրամ (2015թ.) Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե (50%), մասնակից ընկերություններ (50%) **Ներկայացված ծախսերը վերաբերում են միայն ընդհանուր հայկական տաղավարով՝ հայկական ընդհանուր բրենդի ներքո մասնակցությանը և չեն ներառում ընկերությունների ներկայացուցիչների ուղևորության, մնալու և սննդի ծախսերը:*	Աջակցման մեխանիզմի մշակում – վերջնաժամկետ՝ 2013թ. սեպտեմբեր Աջակցություն – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մարտ	Առաջնային նպատակային շուկաներում ոլորտային ցուցահանդեսներին հայկական ընկերությունների մասնակցություն, երկրի ոսկեգործության ընդհանրական բրենդի առաջմղում:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 6.2. Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի կազմակերպում և միջազգային ճանաչելիության ապահովման աջակցություն	Ոլորտի միջազգային շուկաներում բիզնես կապերի ընդլայնում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
6.2.1. – Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի՝ «Yerevan Show» կազմակերպում* – Պետության կողմից ցուցահանդեսի միջազգային ճանաչելիության ապահովման գործողություններին աջակցություն (օրինակ՝ պետական մակարդակի վրա հրավերներ ոսկեգործության համաշխարհային ոլորտի ներկայացուցիչներին) ** Ցուցահանդեսի հիմնական կազմակերպիչ և ծախսերի ֆինանսավորող՝ «AJA»*	«AJA», ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	-	Աջակցություն – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2013թ. նոյեմբեր	«Yerevan Show» ցուցահանդեսի կայացում և միջազգային ճանաչելիություն:

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 6.3. Ոլորտի առաջմղման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում	Միջազգային մակարդակով և նպատակային շուկաներում Հայաստանի ոլորտի վերաբերյալ տեղեկատվության տարածում և ճանաչելիության խթանում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
6.3.1. Ոլորտի առաջմղման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում – Պորտալի նախագծում – Պորտալի գործարկում – Պորտալի պահպանում և զարգացում **Նշումներ** • Ինտերնետային պորտալը կներառի բոլոր 3 ոլորտները՝ ոսկեգործություն, ժամագործություն և ադամանդագործություն • Կայքը պետք է լինի առնվազն քառալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ օտար լեզու), պարունակի տեղեկատվություն Հայաստանի և ոլորտի արտադրողների և նրանց կոնտակտային տվյալների, ինչպես նաև ոլորտային խորհրդի վերաբերյալ:	Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, «AJA»	Բյուջե – պորտալի ստեղծում՝ 2.5 մլն ՀՀ դրամ (2014թ.), պորտալի սպասարկում և թարմացում՝ 1 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.) Ֆին. աղբյուր՝ Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն	Նախագծում – վերջնաժամկետ՝ 2014թ. մայիս Գործարկում - 2014թ. հունիս Սպասարկում և թարմացում – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. հունիս	Ոլորտի առաջմղման գործող ինտերնետային պորտալ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 6.4. Միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով Հայաստանի ոսկեգործության և ժամագործության ոլորտի առաջմղում	Հայաստանի ոսկեգործության և ժամագործության ոլորտի միջազգային ճանաչելիության խթանում

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
6.4.1. Միջազգային (և մասնավորապես՝ թիրախային շուկաներում) ոսկեգործության և ժամագործության ոլորտի լրատվամիջոցներով Հայաստանի ոլորտի արտադրանքի առաջմղում – Միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ուղեցույցներում, Հայաստանի զբոսաշրջային պորտալում Հայաստանի ոլորտի մասին նյութերի տեղադրում – Միջազգային մասնագիտական ամսագրերի* լրագրողների այցերի կազմակերպում Հայաստան և վերջիններիս հետ անհատական աշխատանք Հայաստանի ոսկեգործության ոլորտի վերաբերյալ մասնագիտական ամսագրերում նրանց կողմից հոդվածների հրապարակման համար (տարեկան 3 լրագրողի մեկշաբաթյա այց Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի շրջանակում) *Jewelers' Circular Keystone (JCK), Art Jewelry, National Jeweler, Make Jewellery, Belle Armoire, W Magazine. Jeweller Magazine, CIJ Jewellery Magazine, Jewellery Business, Jewellery Net Asia և այլն: Ամսագրերի վերջնական ընտրությունը ենթակա է հստակեցման:	ԶՀԳ, «AJA», Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 7.7 մլն ՀՀ դրամ տարեկան (2014-2015թթ.) Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Նախապատրաստում – վերջնաժամկետ՝ 2014թ. ապրիլ Առաջմղում – շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. մայիս	Միջազգային (թիրախային շուկաներում) ոլորտի մասին հոդվածներ

ՌՈՒ 7.

ԱՏԳ ՍՏԵՂԾՈՒՄ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 7.1. Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ԱՏԳ-ի հիմնում	Ոլորտի արտերկրյա ընկերությունների ներկայություն Հայաստանում տեղական ընկերությունների հետ համագործակցության և/կամ սեփական արտադրական միավորների ձևաչափով

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
7.1.1. Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ԱՏԳ-ի հիմնում՝ համապատասխան ենթակառուցվածքներով. – «AJA»-ի հետ բանակցությունների վարում ԱՏԳ տարածքի նույնականացման նպատակով – ԱՏԳ հիմնում	«AJA», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Ֆին. աղբյուր՝ մասնավոր հատված - «AJA» և այլն	Վերջնաժամկետ՝ 2015թ. հունվար	Հայաստանում ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ԱՏԳ՝ համապատասխան ենթակառուցվածքներով

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 7.2. Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում	3 տարիների ընթացքում ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ 4-5 նոր ընկերությունների ներգրավում՝ տեղական ընկերությունների հետ համագործակցության և/կամ սեփական արտադրական հիմնման ձևաչափով

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
7.2.1. Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների նույնականացում և այդ ընկերությունների հետ հաղորդակցման և բանակցությունների վարման գործողությունների ծրագրի մշակում. – Պոտենցիալ ներդրողների նույնականացում («AJA»-ի աջակցությամբ) – Այդ ընկերությունների հետ հաղորդակցման և բանակցությունների վարման գործողությունների ծրագրի մշակում – Ընկերություններին առաջարկվող հնարավոր ներդրումային խթանների (ի հավելումն առկա օրենսդրական արտոնությունների) փաթեթի որոշում	ԶՀԳ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, «AJA», ՀՀ սփյուռքի նախարարություն	-	Վերջնաժամկետ՝ 2014թ. դեկտեմբեր	Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների ցանկ Ընկերությունների հետ հաղորդակցման և բանակցությունների վարման գործողությունների ծրագիր
7.2.2. Նպատակաուղղված առաքելությունների, ներդրումային ֆորումների և անհատական բանակցությունների միջոցով ընտրված ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների ներգրավում - ԱՏԳ-ի պոտենցիալ ընկերությունների հետ բանակցությունների վարում - ԱՏԳ օտարերկրյա ներդրումների ներգրավում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, ՀՀ սփյուռքի նախարարություն, «AJA» Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 6.3 մլն ՀՀ դրամ (2014թ.) 7.9 մլն ՀՀ դրամ (2015թ.) Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Շարունակական գործողություն, սկիզբ՝ 2014թ. փետրվար	Ներդրումային հուշագրեր ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների հետ
7.2.3. Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների ուղեկցում ներդրումների իրականացման փուլում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ	-	Գործողության սկիզբը կախված է ընկերությունների ներդրումային ծրագրի մեկնարկից	Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ նոր 4-5 ընկերությունների մուտք Հայաստան

Ռազմավարական նախաձեռնության անվանում	Ակնկալվող արդյունք
ՌՆ 7.3. Ադամանդագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում	3 տարիների ընթացքում ադամանդագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ 2-3 ընկերությունների ներգրավում՝ տեղական ընկերությունների հետ համագործակցության և/կամ սեփական արտադրական միավորների ձևաչափով

Գործողություն	Պատասխանատու/ իրականացնող	Բյուջե/ ֆինանսավորման աղբյուր	Ժամկետ	Վերջնական/ ընթացիկ արդյունք
7.3.1. Բելգիայում ադամանդագործության ոլորտի գլոբալ ընկերությունների հետ բիզնես ֆորումի կազմակերպում Սփյուռքի ներկայացուցիչների աջակցությամբ*: Ֆորումը կուղեկցվի նաև անհատական բանակցություններով: **Հանդիպումը կկազմակերպվի Սփյուռքի ոլորտի ներկայացուցիչների կապերի միջոցով*	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, ոլորտի Սփյուռքի ներկայացուցիչներ Արդյունաբերության զարգացման հիմնադրամ	Բյուջե՝ 4.4 մլն ՀՀ դրամ Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	2014թ. ապրիլ	Կազմակերպված համաժողով
7.3.2. Հայաստանում ադամանդագործության ոլորտի գործարար համաժողովի անցկացում և անհատական բանակցություններ ոլորտի ռուսական և այլ գլոբալ ընկերությունների հետ – Կառավարական բարձր մակարդակով ադամանդագործության գործարար համաժողովի կազմակերպում Հայաստանում – Համաժողովի շրջանակներում պոտենցիալ ընկերությունների հետ անհատական բանակցությունների վարում Հայաստանում ադամանդի վերամշակում իրականացնելու նպատակով – Այցեր տեղական ընկերություններ (անհրաժեշտության դեպքում նաև ԱՏԳ) և առանձին հանդիպումներ հայկական արտադրողների, պետական և մասնավոր շահառուների և պոտենցիալ ներդրողների միջև	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ԶՀԳ, ՀՀ կառավարություն Արդյունաբերության զարգացման հիմնադրամ, «AJA», Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միություն	Բյուջե՝ 13.9 մլն ՀՀ դրամ Ֆին. աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե	Համաժողովի անցկացում - 2014թ. հոկտեմբեր	

ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ. 2013-2015

ԱՄՓՈՓ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բյուջեի ծախսերի բաշխումն ըստ ֆինանսավորման աղբյուրների, հազ. դրամ

Հազ. դրամ	2013	2014	2015	2013-2015
Գործողությունների պլանի բյուջե, ընդամենը	**0**	**126,086**	**77,774**	**203,860**
Պետության ֆինանսավորում	0	56,144	41,889	**98,032**
Մասնաբաժինն ընդամենը բյուջեի մեջ	*0%*	*45%*	*54%*	*48%*
Այլ ֆինանսավորում	0	69,943	35,885	**105,828**
Մասնաբաժինն ընդամենը բյուջեի մեջ	*0%*	*55%*	*46%*	*52%*

Նշում.
Բյուջեի ցուցանիշներն արտացոլում են ծախսերի նախնական գնահատականները և կարող են փոփոխվել գործողությունների բյուջեների ճշգրտման և ֆինանսավորման աղբյուրների հետ բանակցությունների արդյունքում: Տե՛ս «Ծախսերի բաշխումն ըստ գործողությունների ուղղությունների»՝ աղյուսակը հաջորդիվ՝ գնահատման ենթակա ծախսերի համար:

Ծախսերի բաշխումն ըստ գործողությունների ուղղությունների, հազ. դրամ

Հազ. դրամ	2013	2014	2015	2013-2015
ՌՈՒ 1. Օրենսդրական բարեփոխումներ	**0**	**0**	**0**	**0**
ՌՆ 1.1. Ոսկեգործական վերջնական արտադրանքի ԱԱՀ հարկման նոր մոտեցման կիրառում և ոսկյա զարդերի ու ոսկու ձուլակտորների հանձնումը եկամտահարկից ազատում	0	0	0	**0**
ՌՈՒ 2. Մատչելի հումքի ապահովում	**0**	**0**	**0**	**0**
ՌՆ 2.1. Ռուսական ադամանդի հումքի ձեռք բերման պայմանների բարելավում	0	0	0	**0**
ՌՆ 2.2. Հայաստանում ոսկու վերջնական զտարկման հնարավորության իրագործելիության ուսումնասիրություն	0	0	0	**0**
ՌՈՒ 3. Որակի ապահովում և վերահսկում	**0**	**34,060**	**0**	**34,060**
ՌՆ 3.1. Որակի վերահսկողության օրենսդրական դաշտի ամբողջականացում	0	0	0	**0**
ՌՆ 3.2. Վերահսկում իրականացնող կառույցների կարողությունների զարգացում	0	34,060	0	34,060
ՌՆ 3.3. Որակի վերահսկողության ստուգումների վերսկսում	0	0	0	**0**
ՌՆ 3.4. Հարգորոշման առավել կատարելագործված տեխնոլոգիաների կիրառում	0	0	0	**0**
ՌՆ 3.5. Հարգադրոշման միջազգային փոխճանաչելիության ապահովում	0	0	0	**0**
ՌՆ 3.6. Տեղեկատվական համակարգերի ստեղծում և սպառողների իրազեկության ապահովում	0	0	0	**0**
ՌՈՒ 4. Մասնագիտական կրթության բարելավում և աշխատուժի վերապատրաստում	**0**	**28,345**	**28,345**	**56,690**
ՌՆ 4.1. Մասնագիտական սեմինարների կազմակերպում և մասնակցություն այլ երկրներում կազմակերպվող մասնագիտական սեմինարների	0	18,345	18,345	**36,690**
ՌՆ 4.2. Երկարաժամկետ հեռանկարի համար Հայաստանում գիտակրթական ինովացիոն համալիրի ստեղծման ուսումնասիրություն և ոսկեգործական դիզայնի մասնագիտական բարձրակարգ դպրոցի հիմնման մեկնարկ	0	0	0	**0**
ՌՆ 4.3. Պետության կողմից ժամագործության ոլորտի աշխատուժի՝ արտերկրում վերապատրաստման համաֆինանսավորում	0	10,000	10,000	**20,000**
ՌՈՒ 5. Ներդրումների և արտահանման ֆինանսական աջակցություն	**0**	**0**	**0**	**0**
ՌՆ 5.1. Ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորման մեխանիզմի ապահովում	0	0	0	**0**
ՌՈՒ 6. Ոլորտի առաջմղում	**0**	**39,020**	**41,526**	**80,545**
ՌՆ 6.1. Առաջնային նպատակային շուկաներում ցուցահանդեսների մասնակցության աջակցություն	0	27,820	32,826	60,645
ՌՆ 6.2. Հայաստանում ամենամյա միջազգային ոսկեգործական ցուցահանդեսի կազմակերպում և միջազգային ճանաչելիության ապահովման աջակցություն		0	0	0
ՌՆ 6.3. Առաջմղման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում	0	3,500	1,000	4,500
ՌՆ 6.4. Միջազգային մասնագիտական մեդիայի միջոցով ոլորտի արտադրանքի առաջմղում	0	7700	7700	15,400
ՌՈՒ 7. ԱՏԳ ստեղծում եվ օտարերկրյա ընկերությունների ներգրավում	**0**	**24,661**	**7,904**	**32,565**
ՌՆ 7.1. Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ԱՏԳ-ի հիմնում	0	0	0	**0**
ՌՆ 7.2. Ոսկեգործության և ժամագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում	0	6,323	7,904	**14,226**
ՌՆ 7.3. Ադամանդագործության ոլորտի Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում	0	18,338	0	**18,338**